կողմեն ծալված չեն, այսինքն զույգ թղթերե չեն կազմված թերթերը, այլ մեյ մեկ թուղթերե, որոնք նաև բարակ սրբրմով (կաշիե բարակ թել) կարված են թերթերը կազմելու համար, ետքը, ըստ կազմության օրինաց, իրարու կարված են գիրքը կազմելու համար»[67]։ Անշուշտ, հիշյալ երևույթները (թանաքի քայքայելը և պրակավորելու ձևը) միայն այս ձեռագրերին կամ գրչության այս կենտրոնին հատուկ չեն։ Տվյալ դեպքում մեզ այն հետաքրքրում է որպես նույն գրչի և գրչության կենտրոնի ստեղծագործության առանձնահատկության օժանդակ ապացույց։ Կան այս տեսակետը հաստատող կողմնակի փաստեր ևս։ Ստեփանոսը «բազում իրօք օգնական» եղած Վարդանի հետ հիշում է նաև «ծերունի պատուական զԱւետիս քահանայն», և «զշնորհազարդեալ քահանայն Ստեփաննոս»[69]։ Ինչպես երևում է Ավագ վանքի միաբան Ստեփանոսը և Վարդան գրիչը 1201 թ. գործակցել են միմյանց հետ, որոնց մասնակից է եղել նաև Աւետիս քահանան։ Սա ստացող Աստուածատուրի եղբայր Ավետիսն է, իսկ շնորհազարդյալ քահանա Ստեփանոսը Տօնականի և Ստեփանոսի Աւետարանի ծաղկողը։

Ավագ վանքում գրչության արվեստը այդ ժամանակ բուռն ծաղկում էր ապրում։ Այնտեղ հավաքվել էր գրչության արվեստին հմուտ վարպետների մի բույլ։ Ղազար վարդապետը՝ «զվարդապետսն մեր» ասելով, Լուսավորչի և Ավագ վանքերի մի շարք միաբաններ է հիշում։ Աստվածատուր Բաբերդցին այս միջավայրից միայն կարող էր ընտրել իր ծրագրած գործի համար «հմուտ և վարժ ամենայն արհեստի գրչության» վարպետ, որ գրեր հսկայատիպ մագաղաթյա թերթեր, և ծաղկող, որ գործին արժանի մանրանկարներ կատարեր։ Վարդանը ոչ միայն գրելու մեջ էր վարժ ընդհանրապես, այլև Տօնական գրելու մեջ։ Նա արդեն մի անգամ Տօնական էր ընդօրինակել։ 1200 թ. իր օրինակած Ավետարանի ստացող Ամբակումի «հոչակեալ բարեհամբաւութիւն» է համարում այն, որ նա «նաև բազում աշխատութեամբ ստացեալ Տաւնական գերապայծառ», որից հետո միայն «ետ գրել զսուրբ Աւետարանս»[69]։ Եվ ահա Վարդան Կարնեցին Ավագ վանքում 1200 թ. Ամբակում և Սարգիս եղբայրների համար մի ավետարան ավարտելուց հետո սկսում է Բաբերդի տանուտեր Աստվածատուրի պատվիրած Տօնականի ընդօրինակությունը և «զկնի երից ամաց եհաս յաւարտ բանիս»[70]։ Մենք տեսանք, արդեն, որ Վարդանը Տօնականն ավարտում է 1202 թվականին, հետևաբար 1200, 1201 և 1202 թվականներն են այն երեք տարիները, որոնց ընթացքում գրիչն ստեղծում է հայերեն մեզ հայտնի ամենամեծ ձեռագիրը։

Այսպիսով, Մաշտոցյան Մատենադարանի № 7729 ձեռագիրը, որ հայտնի է Մշո Տօնական կամ Ճառընտիր անունով, ընդօրինակվել է Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան վրա գտնվող Ավագ վանք մենաստանում, որը, որպես հայ գրչության կարևոր կենտրոն, այդ և հետագա դարերում հոչակվում է իր ընտիր գրիչներով և մատենագիրներով։

---

67 Բարգեն Կյուլեսերյան, Յուցակ, էջ 27։

68 Մատենադարան, ձեռ. № 6332, էջ 7։

69 Յիշատակարանք, Ա, էջ 646։

70 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602բ։